




ՆՈՐԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

ԱԼԳՈՒՍ ԴՕԳԻ



ԳԵՂԵՑԻԿ

ՆԻՒԵՐՆԵԶԱ

Թարգմ. Ա. Ա. Խելինկով

ՈՊ. Պ. Ա.

Թ-ՖԵԼԻՍ

Առաստիճան «Էլսպիթանօ» Ելիզաբետինսկայա № 17

1911

845

17-68

-6 NOV 2011

840.

F-68


ԱՐ.

ՆՈՒԻՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

ԱԼԳՈՆ ԴՐՁ

ՆՈՒԻՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

1. Վայրի կարապներ (սպառուած)	8
2. Առաջին վիշտ (սպառուած)	10
3. Անտառապահը (սպառուած)	12
4. Աշխէնն ու Մարզարիտը (սպառ.)	10
5. Աղքատի սահմանը (սպառ.)	5
6. Գոհարիկն ու Աստղիկը (սպառ.)	10
7. Նելլօն ու Թատրաշը (սպառ.)	10
8. Գիլում (սպառ.)	20
9. Կենդանի է արդեօք (սպառ.)	8
10. Բարեկամներ (սպառ.)	12
11. Առակներ քնական պատմութիւնից (սպառ.)	12
12. Մագնիս	12
13. Արջի պատմութիւնը	15
14. Ոզնիներ	8
15. Թմիլիկը (սպառ.)	12
16. Լեռան աղջիկը (սպառ.)	10
17. Բու	12
18. Փոքրիկ Պարոյրի արկածները	15
19. Փիղ	8
20. Ռուրէնի զբաղմունքը	25
21. Որք Աննան	12
22. Արցոնք	15
23. Անձազո՞ւ մնանուկ	11
24. Դարեւոր կաղնի	6



6  
00  
00  
00  
00  
00

ԳԵՂԵՑԻԿ



ՆԻՒԵՐՆԵԶԱ

Թարգմ. ռուսերէնից  
ՕԲ. Պ. Ա.

ԹԻՖԱՆԻ

Արագատիու «Էսպէրանս» ելիզավետինսկայա № 17  
1911


05 MAR 2013

1757

ՏԾԵՎՈՒ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ



## ԳԵՂԵՑԻԿ ՆԻԽԵՐՆԵԶԱ

Ա.



արիզի մի խուլ փողոցում, գինեվաճառի տաք սենեակի մէջ նստած զրոյց էին անում նաւատէր քեռի Լուվօն և ատաղձագործ Դիւքակը: Լուվօի տրամադրութիւնը լաւ էր. նրա ծաղկատար կարմիր դէմքը մինչև ականջները ժպիտ էր դարձել, իսկ ահազին մարմինը օրօրւում էր ծիծաղից:

— Այդպէս, բարեկամ, ուրեմն դուք առնում էք իմ բոլոր տախտակները. դէ, չըսկացնենք բաժակները: Գինու բաժակները վերցրին. նրանք և դատարկեցին մինչև վերջին կաթիլը:

Գինետնից դուրս դալով երկու բարեկամները բաժանուեցին միմեանցից:

Քեռի Լուվօն ուրախ տրամադրութեամբ

դէպի տուն ուղևորուեց, նա ձեռները թափահարում էր, ուսերը կծկում, ինչպէս մի աշակերտ, որը լաւ թուանշաններ է տուն տանում:

Լուգօն մի տան առաջ ամբոխ նկատեց, մօտեցաւ և ինչ տեսնի՝ հացթուխի խանութի առաջ մի փոքր տղայ էր նստած, երեսը կեղտուտ, մազերը գզզած, աչքերը տրորում էր իւր նիհար բունցքներով և դառը լաց լինում:

Ոստիկանը հարց ու փորձ էր անում երեխային, ինչպէս մի յանցաւորի, և զբում էր իւր տետրում:

—Անունդ ի՞նչ է, հարցրեց ոստիկանը:

—Տօտօր, պատասխանեց երեխան:

—Երեկի վիկտոր է անունդ:

Տղան այլ ևս չպատասխանեց. նա շարունակեց լալ և աղաղակել՝ «մայրիկ, մայրիկ»:

Ոստիկանը սկսեց հարևաններին հարց ու փորձ անել երեխայի մասին, բայց ոչոք չէր ճանաչում նրան:

—Դոնապան, դու պէտք է որ ճանաչես սրա ծնողներին:

Սակայն դռնապանն էլ չկարողացաւ որոշ պատասխան տալ. միայն այսքանը գիտէր, որ երեխայի ծնողները մի ամիս ապրելով այդ տանը, վարձը չէին վճարել և տանտէրը նրանց դուրս էր արել:

—Նրանք ինչով էին պարապում, հարցրեց ոստիկանը:

—Ոչնչով. հայրն ու մայրը ցերեկը հարբում էին, իսկ երեկոները տուն գալով իրար հետ կուռում և երեխաներին ծեծում էին. երեխաներն էլ լաւ պտուղներ չէին, ամբողջ օրը փողոցում ընկած՝ կամ ողորմութիւն էին խընդրում, կամ մանրավաճառներից որևէ բան թրոցնում:

—Ի՞նչ ես կարծում, ծնողները կը կերպառնան իրանց երեխային վերցնելու:

—Ոչ, ամենակին, նրանք բնակարան փոխելուց օգտւել են, որպէս զի երեխայից ազատուեն. սա հօ առաջին դէպքը չէ, որ այսօր պատահեց:

—Արդեօք ոչոք չի տեսել, թէ ուր գնացին սրա ծնողները:

—Նրանք առաւօտեան վաղ գնացին. մարդը առաջ էր գցել իրերով բարձած, երկանիւ սայրը, կինն էլ ինչոր կապոց ձեռին, երեխաների հետ հետեւում էր նրան. գէհ, հիմա արի ու նրանց գտիր:

Բոլոր շրջապատողները հայհոյում էին այդ տեսակ ծնողներին:

Նորից սկսեցին հարց ու փորձ անել երեխային. մօտիկ խանութպանից իմացան, որ այդ փոքրիկ թշուառականը առաւօտից այդտեղ է գտնուում. մայրը նստեցրել է նրան աթոռի վրայ և ասել. «Այստեղ խելօք կընստես»: Տղան երկար ժամանակ սպասեց, յետոյ քաղց զգալով սկսեց լաց լինել. մօտիկ խանութից նրան հաց տուին.

հացը կերաւ վերջացրեց ու դարձեալ սկսեց լալ.  
խեղուկը քիչ էր մնում լեզապատառ լինէր. նա  
վախենում էր շներից, որոնք պատւում էին  
նրա շուրջը, վախենում էր անծանօթ մարդկան-  
ցից և վրայ հասնող մթնից. նրա փոքրիկ սիրաը  
զարկում էր, ինչպէս նոր բռնած թռչնակինը:

Ամբոխը հետզետէ շատանում էր: Ոստի-  
կանը հարց ու փորձից ոչ մի եզրակացութեան  
չգալով՝ «այդպէս ուրեմն ոչոք չի կամենում  
սրան վերցնել», հարցրեց նա և երեխայի ձեռից  
բռնեց, որ տանէ ոստիկանատուն:

—Մի փոքր սպասեցէք, ձայն տուեց բազ-  
մութեան միջից մէկը:

Ամենքը յետ նայեցին ու տեսան քեռի  
կուփօի ժպտալից ու կարմիր դէմքը:

—Կացէք, եթէ ոչոք չի ուզում, ես կըվեր-  
ցնեմ այդ երեխային:

—Կեցցէք, պ. կուփօ, լսուեց ամեն կողմից:  
Քեռի կուփօն՝ յուզուած սպիտակ գինուց,  
յաջող առուտուրից և շրջապատողների գովա-  
սանքներից՝ կանգնեց բազմութեան մէջ տեղը,  
ձեռքերը խաչեց և ասաց.

—Ի՞նչ կայ այստեղ... Սովորական բան է:

Այսուհետեւ կուփօին ոստիկանատուն տարան,  
որպէս զի պաշտօնապէս յանձնեն երեխան. այն-  
տեղ, ինչպէս ընդունուած է, սկսեցին նրան  
հարցաքննել:

Ի՞նչպէս է ձեր անունը:

—Ձրանսուա կուփօ, պ. ոստիկանապէտ. ես  
ամուսնացած եմ և, կարող եմ ասել, շատ յա-  
ջող ամուսնացած: Կինս խելացի կին է և այդ  
մեծ բախտաւորութիւն է ինձ համար, որովհե-  
տեւ, ինչպէս տեսնում էք, ինքո բաւական բըթա-  
միտ եմ: «Կուփօի վերնատունը դատարկ է», ա-  
սում է կինս...

—Ի՞նչո՞վ էք պարապում, ընդհատեց նրան  
ոստիկանապէտը:

—Նաւատէք եմ, պ. ոստիկանապէտ, «Գե-  
ղեցիկ նիւերնեղա»-ի տէրն եմ: Կարող եմ հա-  
ւատացնել, որ շատ լաւ նաև ունիմ. Փարիզից  
սկսած մինչև կլամեսսի անտառը՝ ում ուզում  
էք, հարցրէք այդ նաւի մասին: Պ. ոստիկանա-  
պէտ, գիտէք որտեղ է դանւում կլամեսսին:

Ներկայ եղողները ծիծաղում էին կուփօի  
շատախօսութեան վրայ, բայց նա շարունակում  
էր առանց կանգնելու:

Գեղեցիկ աւան է կլամեսսին, շուրջը  
անտառ, որտեղ կան շատ յարմար և պէտքական  
ծառեր ատաղձագործական նիւթերի համար: Ես  
էլ այնտեղ եմ առնում ինձ համար ապրանքը և  
յայտնի եմ իբրև լաւ ապրանք մատակարարող:  
Ճիշտ է՝ ես մի փոքր բթամիտ եմ, վերնատունն  
դատարկ է, ինչպէս կինս է ասում, բայց աչքո  
սուր է: Ահա նայեցէք, վերցնում եմ մի գերան,  
օրինակ՝ ինչպէս դուք, ներեցէք խօսքիս, պ. ոստի-  
կանապէտ, գիտաթում եմ թոկով ահա այսպէս...

Լուվօն գրանից թոկ հանելով սստիկանապետի մէջքից փաթաթեց, իսկ վերջինս արդէն համբերութիւնից դուրս գալով գոռաց.

Վերջապէս թողէք ինձ հանգիստ:

—Ոչ, ոչ, պ. ոստիկանապետ, ձեզ պէտք է ցոյց տամ... Այսպէս թոկով փաթաթելով՝ վերանից չափս եմ վերցնում և յետոյ հաշւում եմ, հաշւում... բայց հիմա էլ չեմ յիշում, թէ ինչպէս եմ հաշւում. կինս լաւ գիտէ հաշուել. գարմանալի խելօք է կինս:

—Ասէք խնդրեմ, ի՞նչ կարող էք դարձնել այս տղային:

—Ի հարկէ բանկի տէր չի դառնայ, բայց նաւաստի կը լինի, մեզ նման տղնիւ նաւատէր:

—Դուք երեխաներ ունէք:

—Ինչպէս չէ, երկու երեխայ ունիմ. մէկն արդէն ման է գալիս, իսկ միւսը գեռ ծծկեր է. սրանով երեքը կունենամ: Է՞հ, ինչ արած՝ եթէ երկուսին բաւականանում էր, երեքին էլ կը բաւի: Մի փոքր կը նեղուենք, բայց վնաս չունի, գոտիներս ձիգ կը կապենք և կաշխատենք փայտն աւելի թանկ ծախել:

Վերջապէս Լուվօի տուաջ գրին մի հաստ մատեան, որ պայմանի տակ ստորագրէ, բայց որովհետեւ նա անգրագէտ էր, տողերի վերջը միայն խաչաձև նշան դրեց: Այսուհետեւ ոստիկանապետը յանձնեց նրան ընկեցիկը ասելով.

Վերցրէք այս տղային, Լուվօ, և որպան

կարելի է լաւ կը թեցէք. Եթէ սրա ծնողների մասին բան իմացայ, թէ և շատ քիչ յոյս ունիմ, իսկոյն ձեզ իմաց կը տամամ: Ինձ թւում է, որ դուք ազնիւ մարդ էք. և ես ձեզ հաւատ եմ ընծայում: Միշտ լսեցէք ձեր կնոջը և շատ գինի չխմէք... ցտեսութիւն:

Քեռի Լուվօն երեխայի հետ փողոց դուրս եկաւ և խոնաւ ու ցուրտ օդից սթափուելով զգաց, որ ինքը սխալ քայլ է արել. բայց և այնպէս վճռեց մինչև տուն տանել երեխային:

Այսպէս մտածմունքներով վերջապէս հասան Այուսաելիցկու կամրջին, որի մօտ բազմաթիւ նաւերի հետ միասին խարիսխ էր ձգել և «Գեղեցիկ Նիւերնեղան»: Նաւերի երկար շարքերը վիտում էին գետի մուլթ տարածութեան վրայ. ալիքների ծփալուց նաւերի լապտերները փայլվում էին, իսկ իրար միացնող շղթաները ճոճուռում: Լուվօն երեխան գրկին երկիւղածութեամբ մօտենում է իւր նաւին. նա իւր բոլոր քաջութիւնը հաւաքելով ներս է մտնում և երեխային կանգնեցնում իւր առաջ: Տղան ճանապարհին շատ էր մըսել և հիմա մեծ բաւականութիւն զգաց այս տաք սենեակում, նա քաղցր ժպտաց ու ասաց.

—Ա՞խ, ինչ լաւ է այստեղ:

Տիկին Լուվօն, որ մէջքը դարձրած կարտոփիւ էր տապակում, յետ նայեց ու բարկացած գոռաց.

Սա ինչ է...  
— Ընծայ է, ընծայ, հա հա հա:

Լուվօն աշխատում էր իւր խօսքերին վճռական տոն տալ, բայց չյաջողուեց. կինը հարցական հայեացքով նայում էր նրան և որոշ պատասխանի էր սպասում: Վերջապէս Լուվօն կակագելով ու ստելով մի կերպ պատմեց բոլոր եղելութիւնը:

Տիկին Լուվօն այլ ես չհամբերեց:

—Այ մարդ, դու բոլորովին կորցրել ես խելքդ, ուզում ես մեզ քաղցած մեռցնել, թէ կարծում ես, որ աւելորդ հաց կամ քնելու տեղ շատ ունենք:

Լուվօն լուս նայում էր յատակին:

—Թշուառական, խելքի եկ, քո նաւը վանդակի պէս ծակեր ունի. իսկ փողոցից էլ ուրիշ երեխամնը ես բերում: Այս րոպէին վերցրու և տար որտեղից բերել ես, հասկացար:

—Հասկացայ, ամեն բան կրկատարեմ, միայն ինդրում եմ, մի բարկանար: Ես կարծում էի թէ լաւ բան եմ անում, բայց սխալուեցի: Ի՞նչպէս ես կամենում, հիմա տանեմ:

Լուվօն հնազանդ տոնը իջեցրեց կնոջ զայրոյթը: Կարելի է մի րոպէ նրան թուաց, որ իւր երեխաներից մէկը մոլորուել է փողոցում և օգնութեան ձեռք է մեկնում: Նա միքանի վայրկեան լրելուց յետոյ անբաւական ձայնով ասաց:

—Այսօր արդէն ուշ է, ոստիկանատունը փակ կըլինի. ճար չկայ, այս գիշեր ալիտի

պահենք... վաղն անպաճառ կազատես ինձ դրանից: Լոռութիւն տիրեց. տանտիկինը բարկացած սեղանը բացեց. ամենքը նստեցին ընթրելու: Փոքրիկ վիկտորը մօտ քաշեց իւր բաժին կարտոֆիլով լիք ամանը և ագահութեամբ սկսեց ուտել: Տ. Լուվօն թէկ առ երես բարկացած էր ձեանում, բայց հոգու խորքում ուրախացաւ, որ այսպիսի քաղցած երեխային կերակրում է և յետոյ այնքան իջաւ նրա բարկութիւնը, որ քնելու ժամանակ երեխային թեթև լողացրեց ու գլուխը սանրեց. «Կարծես իւր կեանքում ոչ լուացուել և ոչ սանրուել է», ինքն իրան փընթինթում էր նա:

Փողոցային կեղտոտ տղան մաքրուելով՝ բաւական դուրեկան տեսք ընդունեց: Տիկինն ուրախ էր իւր արած գործի համար:


—Քանի տարեկան է, հարցրեց նա ամուսնուց:

Լուվօն ուրախացաւ, որ վերջապէս առիթ ունեցաւ խօսելու, կը նշանակէ՝ կնոջ բարկութիւնն իջել է. Նա գրպանից հանեց բարակ թոկ և տղայի մէջքից փաթաթելով, ինչպէս կլամես սում գերաններ էր չափում, ուզեց նրա տարիքն իմանալ:

Կինը, որ զարմացած նայում էր, թոկը ձեռից խլեց ու ասաց.

—Թշուառական, այդ ի՞նչ ես անում, դա գներան է, որ չափս ես վերցնում:

Քեռի լուվօի բանը թարսուել էր այսօր։ Նա  
ամաչեց իւր արածից և լուռ նստեց իւր տեղը.  
իսկ կինը փոքրիկ Վիկորին պառկեցրեց իւր  
աղջկայ-կլարայի մօտ։ Փոքրիկը քնի մէջ զգաց,  
որ մի բան դրին նրա կողքին. թևերը ձգեց և  
իւր հարկանին դէն քշեց։ Ճրագը մարեցին։ Զու-  
րը ծփում էր, խփելով նաւին և մեղմ օրօրում  
էր փայտեայ ընակարանը։



Փ ոքրիկ Կլարան միշտ վաղ էր զարթ-  
նում։ Այս առաւօտը նա զարմա-  
ցած մնաց, որ մայրը սենեակում  
չէր և իւր բարձի վրայ մի անծանօթ գլուխ  
էր գրուած։ Նա աչքերը տրորեց փոքրիկ  
բոռնցքներով, յետոյ իւր հարեանի մազելից  
բռնեց քաշեց։ Խեղճ վիկտորն իսկոյն զարթ-  
նեց և զարմացած դէս ու դէն նայեց։ Երե-  
խաների գլխին, տախտակամածի վրայ ինչոր  
մարդիկ ման էին գալիս, Կլարան մատը տնկեց  
դէպի վեր և ցոյց տալով առաստաղը, կարծես  
հարցնում էր իր բարեկամին, թէ դա ի՞նչ բան է։  
Առաւօտեան ժամը 6-ին գնորդատաղձա-  
գործն եկել էր Լուկօի ապրանքը վերցնելու,  
տախտակները նաւից կրում էին դէսպի գետա-  
փը։ Քենի Լուկօն եռանդով գործի էր կպել, նա

ամբողջ գիշեր աչք չէր խփել, անհանգիստ լինելով այն մտքից, որ առաւտը թշուառ տղին նորից ոստիկանատուն պիտի տանէ:

Բայց, ինչպէս երևում էր, կինը բոլորովին մոռացել էր Վիկտորի գոյութեան մասին. նա երեխան զրկին գետափին կանգնած՝ համրում էր նաւից կրած տախտակները և միանգամայն դարմանում մարդու աշխատասիրութեան վրայ: Երբ շատ ծանր գերան էր պատահում, Լուվօն օգնութեան էր կանչում իւր փոքրաւոր Պետրոսին, որը երիտասարդ ժամանակ ոտի մէկը մնան էր և այժմ փայտէ ոտով էր ման գալիս: Նա այնքան քիչ գործ էր շինում, որ միայն Լուվօի նման բարի մարդը կարող էր նրան պահել:

Տիկին Լուվօն յանկարծ յիշեց, որ բաւական ժամանակ է անցել և կլարան դեռ դուրս չի եկել. գնաց նաւախուցը աղջկան տեսնելու: Քեռի Լուվօն այդ նկատելով, սրտատրոփ սպասում էր թէ ինչ կրլինի. բայց զուր էր նրա երկիւղը. կինը ծիծաղաղէմ դուրս եկաւ սենեակից և ձեռի շարժումով սկսեց ամուսնուն կանչել: Լուվօն սաստիկ ուրախացաւ և շտապեց դէպի խուցը: Երբ փոքրիկ պատուհանից ներս նայեց հետեւալ տեսարանը ներկայացաւ նրան:

Երկու երեխայ շապկանց ու ոտարորիկ նրատած էին անկողնու վրայ, քրեղանով ապուր էին բռնել և որովհետեւ մի գդալից աւելի չունէին, հերթով կերակրում էին միմեանց:

Լուվօն ուրախ վերադարձաւ իւր գործին. նա ուրախ էր ոչ այնքան երեխաների արածի վրայ, որքան կնոջ բարի տրամադրութեան: Լուվօն ապրանք կը ելու ժամանակ սովորաբար հանգստանում էր կամ գինետուն մտնում, մի քիչ կոնծում, այդ պատճառով ամբողջ շաբաթ էր տեսում նաւի դատարկելլը: Կինը շարունակ անհանգիստ էր լինում:

Սակայն այս անգամ քեռի Լուվօն իսկի չէր ճանաչւում. մինչև գործն աւարտելլը ոչ հանգստացաւ, ոչ գինի խմեց, այլ բոլոր ժամանակ եռանգով աշխատում էր:

Ինչ վերաբերում է փոքրիկ Վիկտորին՝ նա էլ կարծես հասկանում էր, որ հարկաւոր է իրան ցոյց տալ. նա մի լաւ դայեակի նման նայում և զբաղեցնում էր կլարային, այնպէս որ փոքրիկը առաջին անգամ իւր կեանքում ամբողջ օրը առանց լացի անցկացրեց:

Տիկին Լուվօն այդ տեսնելով վճռեց Վիկտորին առ ժամանակ պահել մինչև իրանք նորից ճամբայ ընկնէին: Այդ երեկոյ նա բան չասաց տղային հեռացնելու մասին. այլ ընդհակառակը՝ նրան լաւ կերակրեց ու պառկեցրեց քընելու:

«Գեղեցիկ նիւերնեզան» շնորհիւ Լուվօն եռանգուն աշխատանքի երեք օրից դատարկուեց: Հետեւալ օրը քեռի Լուվօն նորոգում և կարկատում էր իւր նաւը, իսկ հինգերորդ օրը ճամ-




բայ սկիտի ընկնէին; Լուվօն սրտատրով սպա-  
սում էր կնոջ սարսափելի խօսքերին՝ «Թէհ, ժա-  
մանակ է Վիկտորին ոստիկանատուն տանելու»:  
Վերջապէս ինքը առաջինը խօսքը բացեց:

— Ի՞նչ կասես, այ կնիկ Վիկտորին տանեմ:

Կինը լուռ էր, որովհետեւ նա սկզբում հա-  
կառակ էր Վիկտորին ընդունելու, հիմա իրան  
արդարացնելու միջոց էր որոնում նրան չարձա-  
կելու: Վերջապէս խօսեց:

— Լուվօն, ինչպէս միշտ, այս անգամ էլ մեծ  
յիմարութիւն արիր սրան ընդունելով. հիմա էլ  
ճար չկայ, տղան մեզ հետ կապուել է, կարան  
էլ չի հեռանում նրանից, և բոլորիս համար էլ  
ծանր կրվինի նրանից բաժանուել, ևս վճռել եմ  
տղային պահել միայն մի պայմանով. հէնց որ  
դու հարեւս կամ կլարան սկսէ իւր չարութիւն-  
ներով ինձ ձանձրացնել, իսկոյն դրան ոստիկանա-  
տուն կուղարկեմ:

Քեռի Լուվօն դէմքը հճուանքից փայլեց.  
վճռուած բան է, ինքն այլ ևս չպիտի խմէ:  
Մեկնելու ժամանակ էր. Լուվօն ուրախ երգելով  
հաւաքում էր նաւի հաստ պարանը և ճանապարհ  
ընկնելու պատրաստութիւններ տեսնում: Ահա մի-  
քանի ըսպէից յետոյ «Գեղեցիկ Նիւերնեզան»  
միւս նաւերի շարքում քարշ էր գալիս շոգե-  
նաւի ետևից:



Կ իկառն իւր կեանքում առաջին ան-  
գամն էր գուրս գալիս քաղաքից:  
«Գեղեցիկ Նիւերնեզան» սլանում  
էր կանաչին տուող գիւղերի, ձիւսափայլ կա-  
վճէ բլրակների, կանաչազարդ սարերի ու  
բլուրների մօտով:

Քեռի Լուվօն այս անգամ զարմանալի հաս-  
տատական գանուեց, ոչոքի հրաւերը չընդունեց  
և զինու մի կաթիլ անգամ չխմեց: Բոլոր նրա  
ուղեկիցներն ու ճամբին գտնուող զինեվաճառ-  
ները զարմանում էին նրա յանկարծակի վի-  
խուելու վրայ: Բայց նրանք չգիտէին, որ Լու-  
վօն չգայթակղուելու համար ուժից վեր եռանդ  
էր գործ գնում:

Պետրոսը փայտէ ոտը տիտիկացներով, յետ  
ու առաջ էր գնում նաւի տախտակամածի վրայ:  
Նա իւր ամբողջ կեանքը անյաջողութեան

մէջ անցկացնելով՝ այժմ լուռ ու անտրտունջ ծառայում էր Լուվօին։ Դպրոցում եղած ժամանակ ընկերներից մէկը նրա աչքը հանել էր. սղոցարանում կացինը կտրել էր նրա ոտը, իսկ շաքարի գործարանում եռման ջուրը նրան խաշել էր։ Նա մուրացկան կրդառնար և քաղցած կրմեռնէր մի անկիւնում, եթէ բարի Լուվօն նրան չընդունէր իւր մօտ։

Նրան տուն ընդունելն էլ նոյնքան աղմուկ հանեց իւր ժամանակին, որքան փոքրիկ Վիկտորին։

Փարիզից դուրս գալուց 12 օր յետոյ «Գեղեցիկ Նիւերնեզան» խարիսխ ձգեց ու կանգ առաւ իւր ձմեռանոցում։ Դեկտեմբերի սկզբից մինչև փետրուարի վերջը նաւատէրերը էլ չեն ճանապարհորդում։ Նրանք այդ ժամանակամիջոցում նորոգում են իրանց նաւերը և անտառում ծառեր առնում։

«Գեղեցիկ Նիւերնեզան» իւր ձմեռելու տեղում բոլորովին ուրիշ պատկեր էր ներկայացնում. դեկը վերցրած էր, կայմը ծալած ու տեղաւորուած էր շտեմարանում, այնպէս որ նաւի վերին տախտակամածի վրայ ազատ կարելի էր խաղալ ու վազվակել։

Կեանքի այս փոփոխութիւնը փոքրիկ Վիկտորին մեծ ուրախութիւն էր պատճառում։ Նա նմանում էր մի թռչնակի, որին վանդակում երկար պահելուց յետոյ՝ ազատ բաց էին թողել։ Նրա առաջ տարածւող վեհ բնութիւնը հիացըել

էր տղային։ Վիկտորը առաջուայ նման խուլ ու համբի տպաւորութիւն չէր թողնում. երբ արդէն հասկացաւ, որ այլ ևս հեռացնելու երկիւղ չէ սպառնում իրան, լեզուն էլ բացուեց և դէմքն էլ ուրախութիւնից փայլեց. փոքրիկ կլարան էլ շատ մտերմացաւ տղայի հետ և միասին միշտ ուրախ էին լինում։

Տ. Լուվօն դարձեալ մի աղջիկ ծնեց և ընտանիքի մէջ նոր հոգս ու ցաւ աւելացաւ։

Հարևան-գիւղացիները չէին հաւանում Լուվօի այդ վարմունքը և նոյն իսկ իրանց քահանային էլ յայտնեցին, որ Լուվօի կողմից յիմարութիւն է երեք երեխայ ունենալով՝ իրան նեղել և փողոցից էլ օտար երեխայ վերցնել, որդեգրել։

Քահանան էլ գիտենալով Լուվօի գրութիւնը, պարտք համարեց այցելել նրան և իւր բարի խորհուրդները տալ. սակայն տ. Լուվօն մինչև անգամ վիրաւորուեց ու ասաց.

— Ամուսինս, ճիշտ է, սխալմունք արաւ, բայց եղածն եղաւ. աւելորդ է տրտնջալ և եթէ սրանից էլ նեղ գրութեան մէջ ընկնենք, դարձեալ ոչոքի օգնութեան չենք դիմի։

Այդ ըոպէին Վիկտորը ներս մտաւ փոքրիկ Միմիլը գրկին։ Քահանան այլ ևս խօսք չգտնելով՝ տղայի գլխին ձեռք դրեց ու հանդիսաւոր ասաց.

— Աստուած օրհնում է մեծ ընտանիքները,

և մնաս բարով ասելով՝ դուքս եկաւ խուցից:

Տիկին Լուվօն Վիկտորին այնպէս սիրեց, որ չէր բանազանում իւր որդկերանցից. Երբ տղան եօթը տարեկան եղաւ, Կլարայի հետ միասին դպրոց ուղարկեցին: Վիկտորը շատ ընդունակ էր և շուտով գերազանցեց իւր ընկերներին:

Վիկտորը Կլարայի հետ տուն վերադառնալիս միշտ անտառի միջով էին անցնում: Նրանք մեծ բաւականութեամբ նայում էին թէ ինչպէս են կտրում ծառերը: Ճարտար Վիկտորը շատ անգամ ծառի կատարն էր ենում թոկ կապելու, որի օգնութեամբ ծառը պառկեցնում էին: Երբ նա ամենաբարձր ճիւղի վրայ էր լինում, Կլարան վախից գոզում էր, իսկ չարածճի տղան նրան բարկացնելու համար դիտմամբ շարժում էր ճիւղը և ինքն էլ վրան ճօճւում:

Նրանք տուն վերադառնալիս երբեմն մտնում էին ատաղձագործ Մոժանդրի մօտ. սա մի նիհար ու բարձրահասակ մարդ էր, որ մենամենակ առանց ընկեր-բարեկամի ապրում էր անտառի խորքում: Ամենքը զարժանում էին այդ հեռու տեղից եկած և միայնակ ու լուռ ապրող անձանօթի վրայ: Մոժանդրը ամբողջ վեց տարի, ինչպէս մի աքսորեալ, շարունակ աշխատում էր: Կարծում էին, որ նա շատ փող ունի, և նա հարստի համբաւ էր ստացել: Ոչ մի մօտ ծանօթ չունէր, միայն քահանան գիտէր, որ նա հեռու տեղից եկած մի այրի է, էլ ոչինչ:

Երբ երեխաները զնում էին Մոժանդրի մօտ, նա գործը թողած՝ սկսում էր նրանց հետ զրոյց անել, մանաւանդ Վիկտորին շատ սիրեց և սովորեցրեց նրան փայտից փոքրիկ շնդենաւեր շինել:

Մի անգամ նա Վիկտորին ասաց.

— Դու յիշեցնում ես ինձ իմ կորցրած տղային: Եւ կարծես վախեցած իւր իսուքից՝ աւելացրեց.

— Այդ շնտ վաղուցուայ բան է:

Մի ուրիշ անգամ էլ նա քեռի Լուվօին ասաց.

— Երբ քեզ համար դժուար լինի Վիկտորին պահելը, տուր ինձ, ես կըորդեգրեմ նրան և քակագ կուղարկեմ ուսում առնելու:

Լուվօն մերժեց. սակայն Մոժանդրը յոյսը չկարեց և համբերութեամբ սպասում էր, որ վաղ թէ ուշ Լուվօն կըծանրաբեռնուի ընտանիքով և ստիպուած կըլինի Վիկտորից ազատուել:

Այդպէս էլ եղաւ: Լուվօի գործերը շատ անյաջող գնացին. առուտուրի մէջ վնասուեց. Պետրոսը յաճախ հիւանդանում էր, և որ ամենից սարսափելին էր՝ յանկարծ հիւանդացաւ ու անկողին մտաւ ու. Լուվօն:

Երեխաների լաց ու կոծը բոլորովին շշմեցրին քեռի Լուվօին. նա դլուխը կորցրած սուպի տեղ դեղ էր տալիս հիւանդին, դեղի տեղ մի ուրիշ բան: Կինն այնքան ձանձրացաւ նրան անմիտ վարմունքից, որ արգելեց նրան իրան մօտենալ և այդ գործը յանձնեց փոքրիկ Վիկտո-

րին, որը ամենայն ճշտութեամբ կատարում էր:  
Առաջին անգամ իւր կեանքում լուվօն ինքը  
զնեց գերանները. տասն անգամ չափում ու  
համբում էր և դարձեալ սխալում։ Այս, շատ  
դժուար էր նրան առանց կնոջ գործը կառա-  
վարել։ Յետոյ նա գնաց Փարիզ, այստեղ մի  
անազնիւ գնորդի պատահեց, որը դէպքից օգուտ  
քաղելով խարեց նրան։ Լուվօն սաստիկ վնա-  
տուած տուն վերադարձաւ, նստեց հիւանդի մօտ  
ու ասաց.

—Այ կնիկ, աշխատիր շուտ առողջանաս,  
ապա թէ ոչ մենք կորած ենք։

Տ. Լուվօն կամաց կամաց առողջանում էր,  
բայց նրանց նիւթական դրութիւնը քանի գնում  
վատանում էր։

Վիկտորն էլ արդէն զգալի ծանրութիւն էր  
դարձել նրանց համար. թէն գեռ 12 տարեկան  
էր, բայց մեծի չափ էր ուտում։

«Գեղեցիկ նիւերնեղան» էլ հետզհետէ ան-  
պէտք բան էր դառնում. կարկատելուց բան  
չէր դուրս գալիս. հարկաւոր էր հիմնովին նորո-  
գել կամ բոլորովին դէն զցել։

Փարիզ մեկնելու օրը, երբ Լուվօն գնաց  
Մոժանդրի մօտ մնաս բարե ասելու, վերջինս  
առաջարկեց նրան նախաճաշել և մի բաժակ  
գինի խմել։

—Ես խօսելիք ունիմ քեզ հետ, Լուվօն, բա-  
ժակները լցնելով ասաց Մոժանդրը։

—Զկարծես թէ միշտ այսպէս մենակ եմ  
ապրել։ Կար ժամանակ, երբ ես էլ ապրում էի  
բախտաւոր, լաւ կին ունէի և բաւական հարս-  
տութիւն։ Այդ բոլորը կորցրի և մեղաւորը մի-  
այն ես եմ։

Մոժանդրը կանգ առաւ, այս խոստովանու-  
թիւնը կարծես խեղդում էր նրան։

—Ես երբէք չար չեմ եղած, սակայն մի-  
պակասութիւն ունէի։

—Դու, պակասութիւն։

—Այս, և այդ պակասութիւնը հիմա էլ  
ունիմ, այդ այն է՝ որ ես սաստիկ փողասէր եմ,  
դա է եղել իմ դժբախտութեան պատճառը։

—Ի՞նչպէս, միթէ, խեղա Մոժանդր։

—Ահա թէ ինչպէս. երբ մենք առաջին  
երեխան ունեցանք, խելքս փշեց կնոջս համար  
ծծմօր տեղ գտնել Փարիզում։ Կինս ամեննեին  
չէր ուզում իւր զաւակից բաժանուել և շատ  
իրաւացի ասաց։

«Զէ որ մենք բաւական փող ունենք, ինչու  
զուր ագահութիւն անենք. այդ գործով թող  
զբաղուեն այնպիսի կանայք, որոնք ծանրաբեռ-  
նուած են երեխաներով. իսկ ինձ թոյլ տուր չը-  
բաժանուել քեզանից և երեխայից»։

—Ես անուշաղիր թողի նըա արտասուքը և  
ստիպեցի գնալ Փարիզ։

—Յետոյ ի՞նչ։

—Երբ կինս այստեղ պաշտօն գտաւ, երե-

իսային ինչոք պառաւի հետ գիւղ ուղարկեց.  
այսուհետև ոչ մի լուր չիմացանք մեր երեխայից:  
— Իսկ կիմդ ինչ եղաւ, Մոժանդը:  
— Երբ նա իմացաւ իւր զաւակի կորուսար  
վշտից հիւանդացաւ ու մեռաւ:  
Միքանի բոպէ լոռութիւն տիրեց. Լուվօն  
յուզուած էր լսածներով, իսկ Մոժանդը սիրար  
դառնացել էր այդ յիշողութիւններով:  
— Ես դատապարտեցի ինձ այս ծանր կեան-  
քին. ահա 12 տարի ապրեցի միայնակութեան  
մէջ, բայց այլ ևս չեմ կարող. Սարսափում եմ  
մենակ մեռնելուց: Խղճա ինձ, Լուվօն, տուր ինձ  
վիկտորին, որ փոխարինէ իմ կորած զաւակին:  
Լուվօն դժուար դրութեան մէջ էր: Վիկ-  
տորն իսկապէս թանգ էր նստում նրան. բայց  
հիմա բաժանուել նրանից, երբ տղան կարող էր  
օգտակար լինել, կընշանակէր՝ բոլոր նրա վրայ  
արած ծախսերը կորցրած համարել:

Մոժանդը կարծես հասկացաւ նրա միտքը:  
— Եթէ նրան ինձ տաս, բոլոր ծախսերդ ու  
վնասներդ կըվերագարնձնեմ: Տղայի համար էլ  
լաւ կըմնի: Ես չեմ կարողանում Անտառային  
դպրոցի աշակերտների վրայ սառնասիրտ նայել,  
որովհետև եթէ տղաս չկորչէր, նրանց նման  
պիտի հազնուեր, նրանց նման պիտի սովորէր:  
Վիկտորն աշխատասէր է, ես նրան հաւանում  
եմ: Դէհ, լաւ մտածիր ու համաձայնուիր. ես

Նրան ուսում կըտամ և կըվարուեմ ինչպէս  
հարազատիս հետ:

Երբ երեխաները քնեցին «Գեղեցիկ նիւեր-  
նեզայի» խուցի մէջ երկու ամուսինները երկար  
ժամանակ խօսում էին:

Տիկին Լուվօն այսպէս էր դատում:

— Զէ որ մենք ամեն բան արինք այս  
տղայի համար և պատրաստ ենք դարձեալ մեզ  
մօտ պահելու, բայց որովհետև նրան աւելի լաւ  
վիճակ է սպասում, ուրեմն վճռենք...

Հակառակ իրանց ցանկութեան՝ հայեաց-  
քները դարձրին դէպի քնած երեխաները:

Տիկին Լուվօն Վիկտորի հանգիստ ու ան-  
վրդով դէմքը տեսնելով յանկարծ նեկեկաց.

— Ոչ, Լուվօն, ասադ նա, Աստուած ողոր-  
մած է. թողնենք տղային մեզ մօտ:



ու Սենա գետը աշնան անձրևներից յորդանալով,  
կատաղօրէն առաջ էր վազում։ Բոլոր նաւա-  
տէրերն սկսեցին իրանց նաւերը դատարկել և  
շտապում էին ապրանքը տանել, գետափից էլ  
հեռացնել, որովհետեւ ջուրը շատ էր բարձրացել  
և կարող էր գետափի ծածկել, հեղեղել։ Լուվօն  
նոյնպէս շտապեց ափ հանել իւր ապրանքը և  
մինչև գիշերուայ ժամը 11-ը գործը վերջացրին.  
բայց որովհետեւ գնորդատաղձագործը չէր եկել  
տանելու, այդ պատճառով մնացին նաւախուցի  
մէջ գիշերելու։

Սարսափելի գիշեր էր. շղթաների չխչխկոցը,  
հին նաւի ճռճոցը հանգիստ չէին տալիս լուվօն  
ընտանիքին։ Ուժգին օրօրումներից խարխլուած  
«Գեղեցիկ Նիւերնեղան» ծանր հիւանդի նման  
հառաջանքներ էր արձակում։ Ամբողջ գիշերը  
նրանք ոչ մի ըոսէ չկարողացան աչք խփել.  
լուսաղէմին քեռի լուվօն, տանտիրուհին, Վիկ-  
տորը և Պետրոսը վեր կացան ու գուրս եկան  
խուցից, իսկ երեխաները մնացին այնտեղ։ Գետը  
առելի էր բարձրացել. լայն ու ալեկոծուած ծովի  
պէս նա իւր պղտոր ալիքները ոլացնում էր ցած  
իջած երկնքի տակ։

Մինչդեռ լուվօն իւր կնոջ ներկայութեամբ  
գերանները համրանքով յանձնում էր գնորդ-ա-  
տաղձագործին, ալիքները յանկարծ մի ահազին  
ըեռնաւորուած նաւ բերին ու խփեցին գետափի  
պատին. նաւը ջարդուելով սկսեց ընկղմուել և

Դ.

Ա իկառի 15 տարին լրացաւ։ Նրա հասակը  
կարծես յանկարծ բարձրացաւ և այդ  
գունատ ու նիհար տղան ուժեղ ու լայնաթի-  
կունք պատանի դարձաւ։

«Գեղեցիկ Նիւերնեղայի» վրայ շարունակ  
ճանապարհորդելով՝ նա այնպէս լաւ ուսումնա-  
սիրել էր ճանապարհը, որ հին նաւաստիի նման  
ցոյց էր տալիս ծանծաղուտները, իմանում էր  
ջրի խորութիւնը և կարողանում էր նաւի դեկը  
վարել։ Նա հագնում էր նաւաստու լայն բլուզ  
և կապում էր կարմիր գօտի։ Երբ լուվօն դեկը  
յանձնում էր նրան վարելու, կարան էլ նրա  
մօտ կանգնած գուլպայ էր գործում և նրա ու-  
ժեղ կազմուածքի ու հաստատուն շարժումների  
վրայ հիանում։

Այս անգամ Փարիզից դէպի Կլամեսսի ճանա-  
պարհը շատ դժուարագնաց էր դարձել, որովհե-

դրանից ջրի մի այնպիսի շարժում եղաւ, որ  
խարիսխ ձգած նաւերը իրար դիպան։ Ափից  
սարսափահար ձայն լսուեց «Երեխաներս, երե-  
խաներս»։

Վիկտորը նոր նկատեց, որ իրանց նաւը  
թովից կտրուել է և ափից հեռանում է։ Իսկոյն  
ներս ընկաւ խուզը և մի վայրէանից մանկանը  
գիրկն առած դուրս վազեց։ Կլարան ու Միմին  
էլ դուրս թափուեցին և սարսափած թևերը մեկ-  
նեցին դէպի մայրը։

—Վերցրէք սրանց. նաւակ հասցըէք. թուկ  
գցեցէք, գոռում էր Վիկտորը։

Երեք անգամ թոկ գցեցին ափից, բայց  
նաւը այնքան էր հեռացել, որ թոկը չէր հասնում  
և ջուրն էր ընկնում։ Պետրոսը գլուխը կորցրած  
իւր փայտէ ոտը տխալսկացնելով նաւի մի  
ծայրից միւսն էր վազում։ Իսկ Վիկտորը լացող  
երեխաների վհատուած դէմքերը տեսնելով՝ իւր  
ոյժն ու եռանդը կըկնապատկեց. վազեց դէպի  
դէկն ու գոռաց։

—Մի վախենաք, ես ձեզ կազատեմ։

Եւ իրօք զեկը ուժեղ շարժելով նաւը դար-  
ձրեց իսկական ճամբին։ «Գեղեցիկ Նիւերնեզան»  
գնաց ջրի հոսանքով դէպի Առւստերլիցի կամուրջը,  
որի տակով պիտի անցնէր նաւը։ Կամուրջն  
արդէն մօտ էր. Վիկտորին մի բան շատ էր  
անհանգստացնում. այդ այն էր՝ որ ջուրը բար-

ձրացած լինելով՝ նաւը կամրջի տակով անցնե-  
լիս կարող էլ խորտակուել։

Ահա «Գեղեցիկ Նիւերնեզան» կամրջի տակն  
է. նա աղմկով առաջ է լողում. կամրջի վրայ  
ահագին բազմութիւն է հաւաքուած. ամենքն էլ  
սրտատրով սպասում են թէ «Գեղեցիկ Նիւեր-  
նեզան» իւր ճամբորդներով ինչ վախճան պիտի  
ունենայ։ Վերջապէս կամրջի տակից դուրս ե-  
կաւ նաւը. իսկ վերեկց քաջալերող ճայներ լը-  
սուեցին։ Նաւաստիները վերեկց կարթով բռնե-  
ցին և նաւը կանգնացըին։ Վիկտորը վազեց բըռ-  
նեց վերեկց ձգած թոկի ծայրը, արագ փաթա-  
թեց կայմին և «Գեղեցիկ Նիւերնեզան» ողջ հա-  
սաւ գետափին իւր ճամբորդներով և 15 տարե-  
կան նաւապետով։

Ի՞նչպիսի ուրախութիւն էր այդ երեկոյ։  
Երբ ամենքը նստեցին ընթրիքի, նաւապետի  
պատուաւոր տեղը փոքրիկ հերոսն էր բռնել։  
Քեռի լուվօն ուրախութեան արցունքը աչքերին  
ժպտալով ասաց։

—Այ կնիկ, Վիկտորին չտանենք ոստիկա-  
նատուն։

Իսկ Վիկտորին փաղաքշելով մէջքին էր  
խփում ու ասում։

—Կեցցես, Վիկտոր, ինչ լաւ դարձրիր դե-

կը: Պետրոս, դու նկատեցի՞ր. Ես այսքան տարի նաւապետ եմ, այդպէս չէի կարող դարձնել:

Քեռի Լուվօն երկու շաբաթ շարունակ ամեն պատահողին պատմում էր այդ անցքի մասին:

Սենայի ջուրը կամաց կամաց իջնում էր, ժամանակ էր նորից ճանապարհ ընկնելու: Լուվօն ու Վիկտորն էլ պատրաստում էին, երբ ցրիչը կապոյտ կնիքով նամակ բերեց: Նաւատէրը դողալով բացեց նամակը, սակայն ինքը անգրագէտ լինելով՝ Վիկտորին տուեց կարդալու:

Վիկտորը հետևեալը կարդաց.

«XII շրջանի վերահսկիչի ոստիկանատան գրասենեալից»: «Նաւատէր պ. Լուվօն հրաւիրւում է շուտափոյթ ներկայանալու ոստիկանատան վերահսկիչի գրասենեալը»:

—Միայն այդքան:

—Այսքան միայն:

«Ի՞նչ են ուզում ինձանից», ինքն իրան մտածում էր Լուվօն և շտապ-շտապ պատրաստում գնալու:

Երեկոյեան, երբ նա տուն դարձաւ, շատ ախուր էր և լուս: Կինը հարցրեց պատճառը:

—Մեծ անախորժութիւն պատահեց, պատասխանեց Լուվօն:

—Մեր առևտրի վերաբերմամբ:

—Ոչ, Վիկտորի վերաբերմամբ: Բանից դուրս է գալիս, որ մեր Վիկտորին փողոց դցող կինը

նրա մայրը չի եղել. նա մեռնելիս խոստովանել է, որ երեխային գողացել է:

—Կընշանակէ՝ դու իմացար ովքեր են նրա ծնողները:

—Ո՛չ, ինչից ես ենթադրում, բարկութիւնից դողալով ասաց Լուվօն. եթէ իմանայի հօկասէի և դուռը ետեից խփելով՝ սենեակից դուրս եկաւ:

Այդ օրուանից քեռի Լուվօն էլ չէր ճանաչւում, ամենքի վրայ անտեղի բարկանում էր. քունն ու ախորժակը կորցրեց:

Մի անգամ երբ կլարան ու Վիկտորը խօսք բացին Մոժանդրի մասին, որ դպրոցից վերադառնալիս այցելեն նրան, Լուվօն սասաիկ զայրացաւ Վիկտորի վրայ:

—Զհամարձակուես այլ ևս նրա անունը յիշել. ես էլ գործ չեմ ունենալու նրա հետ:

—Նա քեզ ի՞նչ է արել, հարցրեց կինը:

—Նա ինձ շատ բան է արել, շատ բան, այդ քո գործը չէ. ես գիտեմ իմ անելիքը:

Հետևեալ անգամ Լուվօն փոխանակ կլամեսսում կանգնելու՝ երկու վերատ հետու կանգ առաւ անտառի ափին և յայտարարեց, որ այլ ևս չի կամենում Մոժանդրի հետ գործ ունենալ, և մի ուրիշ գնորդ կըգանի:

Նաւը հեռու կանգնելով՝ երեխաներին էլ արգելք եղաւ. կլամեսսի դպրոցը յաձախելու: Կլարան ու Վիկտորը ամբողջ օրն անտառում

ցախ ժողովելով էին անց կայնում, երբ յոդնում էին, իրանց բեռները գցում էին գետնի վրայ, իրանք էլ նստում և վիկաորը ծոցից գիրք էր հանում ու բարձրածայն կարում էր կլարայի համար, Նրանք սիրում էին, երբ արեի շողքը՝ հազիւ թափանցելով տերեւախիտ ծառերի միջով խաղում էր գրքի և նրանց մազերի հետ, Այդպիսով շատ անդամ երեխաները մոռանում էին, թէ որտեղ են գտնուում և արեի մայր մանելուց յետոյ շատալ քայլերով տուն էին վերադառնում:

Մի երեկոյ Լուկօն նկատեց, որ մի ծեր մարդ անտառից դուրս եկաւ և դէպի իրանց կողմն ուղղեց. նա մեծ գաւազանի վրայ յենուելով՝ դանդաղ առաջ էր քայլում:

Երբ ծերունին մօտեցաւ, ճանաչեցին որ նա Մոժանդըն է. նա մի խեղճ ու ճնշուած մարդու տպաւորութիւն էր թողնում:

—Դու բոլորովին մոռացար ինձ, Լուկօ, ձեռք մեկնելով ասաց Մոժանդըն:

Նաւատէրը շիոթուած ինչոք մըթմըթաց, իսկ կինը շատապեց աթոռ առաջարկել, որովհետեւ Մոժանդըն շատ յոդնած և ուժասպառ էր երեսում:

—Հիւանդէք, պ. Մոժանդըն, հարցըց Լուկօն:

—Այն, մի փոքր մըսել եմ: Հիմա ես տեղափոխում եմ, եկայ ձեղ մնաս բարե ասելու: Առուտուրս դադարեցրի. բաւական հարուստ եմ. շատ փող ունիմ, բայց ինչիս է պէտք, նրանով չեմ կարող բախտ առնել:

Լուկօն յօնքերը կիտած լսում էր. Մոժանդըն շարունակեց.

—Քանի ծերանում եմ, այնքան անտանելի է դառնում մենակութիւնս: Առաջ գործով զբաղուելով մոռանում էի ամեն ինչ. իսկ հիմա ոչ մի բանի չեմ կարողանում կպչել, առաջուայոյժու էլ չկայ: Կարելի է նոր քաղաքում նոր կեանք վարելով մի բանով զբաղուեմ:

Այդ բոպէին Վիկտորին ու կլարան ցախը շալակներին անտառից վերադարձան. Մոժանդընին տեսնելով մօտ վազեցին բարեկելու. Նա գրկեց ու համբուրեց նրանց, ինչպէս միշտ, իսկ Լուկօին դառնալով ասաց.

—Որքան բախտաւոր ես, Լուկօ, դու չորս երեխայ ունիս, իսկ ես ոչ մէկը. և խորը հառաչելով աւելացրեց. ինչ արած ինքս եմ մեղաւոր:

Մոժանդըն վեր կացաւ, բոլորին հրաժեշտ տուեց, յետոյ Վիկտորին համբուրելով ասաց.

—Մնաս բարով, Վիկտոր, աշխատիր ծնողներիդ համար:

Յետոյ ձեռը դնելով նրա ուսին խորը նայեց նրան ու աւելացրեց.

—Ես էլ կարող էի սրա հասակակից տղայ ունենալ:

Լուկօն քիչ հեռու կանգնած՝ մտքում բարկանում էր Մոժանդընի վրայ ու ասում. «Դէհ, կորիք շուտով»:

Սակայն երբ Մոժանդըն սկիտի գնար, Լու-

զօն խղճաց նրան ու խնդրեց մնալ իրանց հետ  
ընթրելու:

— Շնորհակալ եմ, գլուխը թափ տալով ա-  
սաց ծերունին, քաղցած չեմ, ծանր է ինձ նո-  
յել ուրիշի բախտաւորութեան վրայ, երբ ինքս  
վշտացած եմ:

Լուվօն այդ երեկոն լուռանցկացրեց գիշերն  
էլ նաւի տախտակամածի վրայ յետ ու առաջ  
ման էր գալիս. իսկ առաւօտը, առանց մէկին  
բան յայտնելու, դուրս եկաւ տանից: Նա ուղ-  
ղակի գնաց գիւղի քահանայի մօտ, որը նկա-  
տելով լուվօի շփոթուած դրութիւնը՝ կարեկցա-  
բար հարցրեց.

— Հը, ինչ կայ, Լուվօ, կինդ, երեխաներդ  
առնդջ են:

Լուվօն յայտնեց, որ ամենքն առողջ են.  
միայն ինքը մի կարևոր գործով եկել է խորհրդա-  
կցելու:

— Ցիշնում էք, աէք հայր, թէ ինչ էր պատ-  
մում Մոժանդը իւր մասին. որ ինքը միայ-  
նակ է, ոչ կին ունի, ոչ որդի: Բանից դուրս է  
գալիս, որ սրանից 15 տարի առաջ նրա կինը  
գնացել է Փարիզ ծծմայր վարձուելու. երբ դաել  
է պաշտօն, իւր երեխան յանձնել է մի կնոջ, որ  
գիւղ տանի որեւէ ծծմօր տայ: Դժբախտաբար  
նա մի անազնիւ կին է եղել և պարապել է  
երեխաներ գողանալով ու ծախելով մուրացկան-  
ների վրայ, որոնք այդ երեխաների միջոցով

ողորմութիւն են հաւաքում: Այս կինը փոքրիկ  
Մոժանդը չորս տարի պահել է իւր մօտ և  
սովորեցնելիս է եղել ողորմութիւն խնդրել.  
բայց տղան յամառել է, չի մեկնել ձեռքը. այդ  
պատճառով կինը նրան դուրս է արել տանից  
և բախտի բերմունքին թողել: Սակայն վեց ա-  
միս առաջ՝ մեռնելիս նա խոստովանել է իւր  
յանցանքը և յայտնել է ոստիկանութեան երե-  
խայի անունը:

— Այս երեխան մեր Վիկտորն է:

— Ուրեմն Վիկտորը Մոժանդը տղան է,  
զարմացած հարցրեց քահանան:

— Այս:

— Կինշանակէ նրան պէտք է վերադարձնել  
հօրը:

Լուվօն ցնցուեց:

— Հէնց գժբախտութիւնն էլ դրանումն է,  
աէք հայր, ամբողջ վեց շաբաթ անցաւ և գեռ  
ոչոքի, նոյն իսկ կնոջս չեմ ասել: Երէկ Մո-  
ժանդը եկաւ ինձ մօտ, ծերացած ու մաշուած:  
Ես շատ խղճացի և զգացի, որ հարկաւոր է իւր  
որդին տալ նրան: Ինձ թուաց թէ նրա գրպա-  
նից փող եմ գողացել և սաստիկ ամաչեցի: Այլ  
ևս չկարողացայ գաղտնիքը պահել և եկայ ձեզ  
հետ խորհրդակցելու:

— Շատ էլ լաւ ես արել, ասաց քահանան,  
երբէք ուշ չէ սիսակ ուղղել. հէնց այսօր գնա-  
ցէք և որդուն յանձնեցէք իւր հօրը:

ցերին, «այս» կամ «ոչ» կարծ պատասխանում էր և դարձեալ իւր մտքերի ետևից ընկնում։ Այն, «Գեղեցիկ Նիւերնեզայի» փոքրիկ նաւասին շուտ չի կարող մոռանալ իւր վիշտը։


Փարիզ համնելրւն պէս նախկին աւազձագործը կամ ենում է իւր որդուն միանգամից կերպարանափոխել, տանում է խանութ, շորեր և սպիտակեղէն առնում։ իսկ միւս օրը Անտառային դպրոց տանում, այստեղ գիշերօթիկ թողնում։

Վիկտորին արգելում են նոյն իսկ մտածել իւր անցեալ կեանքի մասին. սակայն տղան ոչ մի բուէ չի մոռանում կլարայի սիրելի դէմքը, «Գեղեցիկ Նիւերնեզան» և այն։

Ուսուցիչները զարմանում են տեսնելով նրա գրքի լուսանցքների վրայ նկարած զանազան գիրքով նաւեր, որոնք զարմանալի նմանում են միմեանց։

Դպրոցի վերատեսուչը վերջապէս գանգատում է հօրը Վիկտորի անուշաղրութեան համար։ Ատաղձագործը մնում է զարմացած։ Նա կարծում էր թէ իւր որդին շատ հեզ և ընդունակ է։

Ոչոք չի կամ ենում Վիկտորի հոգու մէջ մտնել և հասկանալ թէ ինչու նա դպրոցում որ և է յառաջադիմութիւն չէ ցոյց տալիս։ Հայրը յուսահատուած է։ Նա յանդիմանում, խնդրում որդուն ուշադիր լինել, վարձում է նրա հայտք



Յ

**Ս**ոժանդրի ուրախութեանը չափ չկար։ Վերջապէս հայրը գտաւ իւր կորցրած զաւակին։ Նա փախստականի նըման շտապով պատրաստուեց և Վիկտորի հետ միամին Փարիզ ուղևորուեց։ Երկաթուղու վագոնում նստած՝ մտածում էր որդուապագայի մասին. նրա վիխում միայն փայլուն մտքեր էին անցնում։ Իսկ Վիկտորն ինդիակառակը՝ տխուր մտածմունքների մէջ խորասուզուած՝ խուսափում էր հօր հայեացքից. նա չէր կամենում, որ հայրը տեսնի. նրա արտասուալից աչքերը։ Այդ բոլորն անսպասելի էր Վիկտորի համար։ Բաժանուելիս կլարան համբուրեց նրան. քեռի Լուկօն յուզուած երեսը դարձրեց. տ. Լուկօն բոլորովին գունատուեց. նոյն իսկ փոքրիկ Միմիլը լաց եղաւ։ Ի՞նչպէս պէտք է ապրեն առանց նրան, կամ ինքը ինչպէս պէտք է դիմանայ առանց նրանց։ Նա հօր հար-

մար ամենալաւ ուսուցիչներ, բայց ոչինչ չի օգնում:

Վիկտորը միշտ տխուր էր. նրան ոչինչչեր զբաղեցնում: Եթէ Կլարան և Լուվիի ընտանիքը տեսնէին, թէ ինչ դրութեան մէջ է իրանց սիրելի Վիկտորը, անշուշտ բաց կանէին նրա բանափի դուռը և տուն ընդունելով՝ սրտանց կըբաժանէին իրանց հացի վերջին կտորը նրա հետ: Այդ միջոցին նրանք էլ դժբախտ էին, քեզի Լուվիի նաւը բոլորովին անպէտքացել էր. Վիկտորն իմացել է այդ Կլարայի նամակներից, որոնք առաջուայ նման քնքուշ էին, բայց հետըզնետէ տխուր:

«Այս, Վիկտոր, երանի թէ դու դարձեալ մեզ մօտ լինէիր», զրում էր Կլարան իւր մանկութեան ընկերոջը: Պարզ է՝ որ Վիկտորի ժամանակ նրանց զբութիւնը լաւ է եղել և դարձեալ նրա վերադարձը կազատէ նրանց: Նա կառնէ նրանց համար նոր նաւ, կաջակցէ նըրանց առեւրին, կըհանգստացնէ Կլարային և ցոյց կըտայ, որ ինքը առաջուայ նման սիրում է նրանց և շնորհակալ է նրանց արած լաւութեան համար: Բայց որպէս զի կարողանայ նըրանց օգնել, հարկաւոր է ուսում առնել և խելօք լինել: Եւ Վիկտորը սկսում է եռանդով սովորել: Ոչ ընկերների հանաքները, ոչ ուսուցիչների զարմանքը չեն խանգարում նրա պարապմունքը: Նա այլ ես չի նկարում նաւեր, աշակերտ-

ների խաղերին չի մասնակցում, այլ զբաղուած է իւր դասերով:

Վիկտորը դարձեալ նամակ է ստանում Կլարայից. ծրարի վրայ գրելիս կարծես դողալիս է եղել Կլարայի ձեռքը, կամ դուցէ սեղանը, որի վրայ նա զրում էր, շարժուելիս է եղել նաւի տատանումից: Ոչ, ոչ, Կլարայի ձեռքը դողալիս է եղել միմիայն յուզմունքից:

— «Ի հարկէ, սիրելի Վիկտոր, զրում էր Կլարան, «Գեղեցիկ նիւերնեղան» այլև չի կարող մեզ ծառայել. նա քանդուեց, ոչնչացաւ և մեզ էլ կործանեց. այդ օրուանից նրա ճակատի սև տախտակի վրայ զրուեց՝ «Ճախտում է փայտի գնով»:

Մարդիկ եկան, նայեցին, մի շաբաթից յետոյ պիտի ծախուի և մենք դատարկ կըմնանք: Ի՞նչ պիտի լինի մեր ճարը. մայրիկո անշուշտ կըմեռնի վշտից. հայրիկո էլ կըխելագարուի»... Վիկտորը չկարողացաւ մինչև վերջը կարդալ նամակը:

Նրան թուաց թէ տառերը շարժւում են, ականջներում զնդզնգում. նա սկսեց զառանցել. Երազում տեսնում է՝ իրը թէ ինքը լողում է Սենա գետի վրայ. յետոյ յանկարծ տեսնում է, որ նաւի յատակի վրայ ջուր է լցուել և աղաղակում է՝ «ջուր, ջուր»: և սարսափից դողալով զարժնում է:

— Դուք հիւանդ էք, Մօժանդը, հարցնում է

ուսուցիչը, որ կից սենեակից վրայ էր հասել:

Շուտով եկաւ դպրոցի տեսուչը, հայրն էլ սրտապատառ ներս ընկաւ: Նա զանազան անկապ հարցեր էր տալիս բժշկին. որդուն նորից կորցնելու միտքը սարսափեցնում էր հօրը:

— Քեզ կըտամ առաջուայ ազատութիւնդ, սիրելի աղաս, մտածում էր հայրը, դու դարձեալ կըլողաս նրանց հետ Սենա գետի վրայ. իսկ ես հեռուից նայելով կուրախանամ քեզնով:

Վիկտորը հիւանդ պառկած մնաց դպրոցի հիւանդանոցում: Արձակուրդները վրայ հասան:

Մի անգամ Վիկտորը քնից զարթնելով, կից սենեակից լսում է ինչոր ծանօթ ձայներ. քիչ յետոյ լսում է Պետրոսի փայտի տխկախկոցը և որքան ոյժ ունի գոռում է. «Ե՞յ, ով է այդտեղ, դուրս եկեք», Յուռը բացուեց և Վիկտորը տեսաւ բոլոր իւր սիրելի գէմքերը, այնտեղ էր Կլարան, Լուվօն իւր ամբողջ ընտանիքով և իւր հայրը: Ամենքը մօտենում և համբուրում են հիւանդին:

Վիկտորը սկսում է հարցեր տալ իւր շրջապատղներին, բայց բժշկի պատուէրով նրան արգելում են խօսել և հայրն է սկսում պատմել բոլոր եղելութիւնը, որը Վիկտորի համար էլ նորութիւն էր:

— Ես եկել էի դպրոց քո ուսման մասին տեղեկանալու: Վերատեսուչն ինձ ասաց, որ դու վերջին օրերը սկսել ես աշխատել և մեծ

յառաջադիմութիւն ես ցոյց տալիս..., ես ի հարձ կէ շատ ուրախացայ և քո ետևից մարդ ուղարկեցի կանչելու. այդ սպասողական դրութեան մէջ էի, երբ ուսուցիչը սփրթնած դէմքով ներս մտաւ և յայտնեց ինձ, որ դու ուշաթափուել ես: Ես իսկոյն վագեցի քեզ մօտ, բայց դու, սիրելի տղաս, ինձ չճանաչեցիր. միքանի օր շարունակ զառանցում էիր, խօսում էիր գիւղի մասին, «Գեղեցիկ Նիւերնեզայի» և կլարայի մասին, էլի ինչոր նոր նաւի մասին: Իսկ երբ քո ձեռին դտած կլարայի վերջին նամակը կարդացի և իմացայ նրանց նեղ զրութիւնը, իսկոյն զրեցի քեռի Լուվօին, որ ամբողջ ընտանիքով գայ ինձ մօտ և մնայ մինչև իր գործերը կուղղուեն:

Բոլոր ներկայ եղողները արտասուեցին, իսկ Վիկտորը առաջին անգամ գրկեց իւր հօրը և համբուրեց նրան անկեղծ որդիխական համբոյը:

Անցաւ միքանի շաբաթ:

Վիկտորը թէկ աւելի լաւ էր զգում իրան, բայց այնքան առողջ չէր, որ հիւանդանոցից տուն փոխագրուէր. այդ պատճառով կլարան իբրև հիւանդապահ մնաց Վիկտորի մօտ. իսկ նրա մայրը տնտեսութիւն էր անում: Պ. Մոժանդը գնաց կլամեսի իւր ծանօթ մի հարուստ վաճառականի մօտ Լուվօի համար պաշտօն խընդելու, իսկ քեռի Լուվօն Մոժանդը սկսած շինութեանն էր նայում:

Վիկտորի առողջութիւնը օրէցօր լաւանում

էր. նա կարողանում էր անկողնից վերկենալ, պատուհանի առաջ բազկաթոռի վրայ նստել և կլարայի հետ ամբողջ օրը զրոյց անել:

Նրանք մտաբերում էին իրանց քաղցր մանկութիւնը և միասին անցկացրած ուրախ ժամերը, այժմ նրանք երկուսն էլ հասունացել էին և ուրախ ծիծաղում էին իրանց արածների վրայ: Օրերն անցնում էին աննկատելի: Վիկտորը բոլորովին առողջացաւ և հիւանդանոցից տուն տեղափոխուեց: Այդ օրը պ. Մոժանդրն էլ կամեսսից վերադարձաւ և կուվօի հարցին՝ թէ համաձայն են իրան վերցնելու՝ պատասխանեց.

—Ի հարկէ կը վերցնեն, նրանք գեռ շնորհակալութիւն էլ արին. նրանց հարկաւոր էր նաւազար նոր նաւի համար:

Քեռի կուվօն ուրախութիւնից շփոթուած նոյն իսկ մոռացաւ հարցնել, թէ ովքեր են այդ խորհրդաւոր «Նրանք»:

Այնուհետև ամենքը միասին գնացին կամեսսի: Ի՞նչ ուրախութիւն... Այնտեղ գետափին իւր կայմը հպարտ վեր բարձրացրած՝ կանգնած էր նոր նաւը, ամբողջովին դրօշակներով և կանաչներով զարդարած: Ամենքի բերնից լսուեց միաձայն բացականչութիւն. «Ի՞նչ գեղեցիկ նաւ է»: Իսկ կուվօն աւելացրեց.

—Սա իխտ գեղեցիկ է, ես չեմ համարձակուի այսպիսի նաւ կառավարել:

Մոժանդրը կուվօին ստիպելով տարաւնաւը,

վերջինս հիացած մնաց նաւի սարք ու կարգով և մաքրութեամբ:

—Սիրելի Մոժանդր, ասաց կուվօն, դու մոռացար ինձ մի բան ասել:

—Ի՞նչ:

—Ախր, չասիր թէ ես ում պիտի ծառայեմ:

—Այդ քեզ հարկաւոր է իմանալ:

—Ի հարկէ պէտք է իմանամ:

—Ուրեմն իմացած եղիր, որ դու քեզ պիտի ծառայես:

—Ի՞նչպէս, կընշանակէ՞ նաւը...

—Այն, այն, քոնն է:

Կուվօն ուրախութիւնից յուզուած՝ քիչ էր մնում ուշաթափուէր:

—Ոչ անկարելի է, ասաց նա, չեմ կարող ընդունել:

Սակայն Մոժանդրը լսել անգամ չէր ուզում նրան:

—Հանգիստ կաց բարեկամ, ես աւելի շատ եմ պարտական, միթէ կարող էի պարտքս մոռացնալ, այն ծախսերը, որ դու արել ես վիկտորիս վրայ քո սուղ միջոցներից:

Եւ երկու բարեկամները միմեանց ձեռքը սեղմեցին ու իրար համբուրեցին:

Այդ միջոցին երեաց քահանան, որը հրաւիրուած էր նաւը օրհնելու: Նաւի քթից թուղթը պոկեցին և ամենքի աչքովն ընկաւ ուկեզօծ խոշոր տառերով գրած «Նոր նիւերնեղա»:

կեցցէ «Նոր Նիւելնեգան», աղաղակեցին բոլոր ներկայ եղողները, սրա կեանքը առաջի-նից աւելի յարատե և երջանիկ թող լինի:

Այսուհետեւ Մոժանդըլ կուզօի ականջին  
ինչ-որ շնչալով, վիկտորի ու կլարայի ձեռքը  
միացրեց և քահանային դիմելով ասադ.

— Տէր հայր, նաւը օրհնեցինք, պլծանք,  
ապա սրանդ հարսանիքը Եղբ անենք:

Վիկտորն ու Կլարան մինչև ականջները կարմը եցին ինչպէս պուտ։ Լուվզի ուրախութեանը չափ չկար, նա ժպտալով կռացաւ աղջկայ ականջին ու շշնջաց.

ԴԵՒՅ ասա, կլարա, ժամանակ չէ վիկ-  
տորին ստիկանատուն տանէլու:



- |     |                            |   |   |   |   |   |    |
|-----|----------------------------|---|---|---|---|---|----|
| 25. | Խըամնատի եզերքին           | . | . | . | . | . | 10 |
| 26. | Լուսատտիկներ               | . | . | . | . | . | 40 |
| 27. | Կատակերգութիւն գոմի բակում | . | . | . | . | . | 12 |
| 28. | Նոր մայրիկս                | . | . | . | . | . | 10 |
| 29. | Բախտը ինչնամն էք           | . | . | . | . | . | 8  |
| 30. | Եօլին եւ Եակին             | . | . | . | . | . | 5  |
| 31. | Փոքրիկ Լեւոնի զաղտնիքը     | . | . | . | . | . | 7  |
| 32. | Կարլ Լիննէյ                | . | . | . | . | . | 20 |
| 33. | Յիսուսի տօնածառը:          |   |   |   |   |   |    |
|     | Մարզարարածաղիկն ու արտուաը | . | . | . | . | . | 10 |
| 34. | Փոքրիկ Հարքիի պարտէզը      | . | . | . | . | . | 15 |
| 35. | Արայադուարքն ու Թօգուկը    | . | . | . | . | . | 10 |
| 36. | Գեհեցիկ Նիւերնեզա          | . | . | . | . | . | 10 |



1757

